

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն №)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ԵՎ
ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ**

Տարեկան հաշվետվության նպատակն է հաստատված աշխատանքային պլաններին համապատասխան տարվա ընթացքում դեկանատների և ամբիոնների կողմից կատարված աշխատանքների միասնական ձևով ամփոփում, վերլուծություն, խնդիրների բացահայտում և առաջարկությունների մշակում: Ամբիոնների կողմից կազմված հաշվետվության մեջ պետք է արտահայտվեն ներքոհիշյալ հիմնական հարցերը.

1. Ամբիոնի նիստում քննարկված հիմնական հարցերը և արդյունքները:
2. Վերադաս կազմակերպությունների կողմից ուսումնական գործընթացին և ամբիոնին վերաբերող հարցերի քննարկման արդյունքները:
3. Դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության բաշխումը և նրանց կատարողականը, թերակատարման պատճառները:
4. Ուսումնական պարապմունքներին ուսանողների մասնակցությունը և բացակայությունների լրացումների կազմակերպումը, վերացման ուղիները:
5. Կուրսային աշխատանքների /նախագծերի/, ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպում, արդյունքների ամփոփում և վերլուծություն:
6. Ստուգումների, ընթացիկ ստուգումների, միջանկյալ և սեսիոն քննությունների արդյունքներն ըստ առարկաների և դասախոսների, դրանց վերլուծությունը:
7. Ամբիոնում դասավանդվող առարկաների ապահովվածությունն առարկայական ծրագրերով, դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, ուսումնամեթոդական գրականությամբ:
8. Դասալսումների թվաքանակն ըստ դասախոսների և վերլուծությունը:

9. Ընթացիկ տարում ամբիոնի կողմից պլանավորված և փաստացի հրատարակումները:
10. Ուսանողների հետ տարվող արտալսարանային աշխատանքները:
11. Դասախոսական կազմի բնական սերնդափոխության վիճակը, վերլուծությունը և խնդիրները:
12. Ամբիոնում տարվող գիտական և հետազոտական աշխատանքները: Արտադրությանը ցույց տրվող օգնությունը:
13. Երիտասարդ դասախոսների և ուսումնասօժանդակ անձնակազմի հետ տարվող աշխատանքները:
14. Ամբիոնում ուսանողական գիտական ընկերության աշխատանքները, մասնակցությունը գիտաժողովներին:
15. Դիպլոմային թեմաների հանձնարարման և նրանց կատարման խնդիրները, թեմաների արդիականությունը:
16. Ուսումնական տարում ամբիոնի ձեռքբերումները:
17. Ամբիոնում լաբորատոր և գործնական պարապմունքների կազմակերպման համար անհրաժեշտ գործիքներով, սարքավորումներով և նյութերով ապահովվածությունը:
18. Կրեդիտային համակարգով կրթության կազմակերպման ուղղությամբ կատարված աշխատանքները և վերլուծությունը:
19. Ամբիոնի կողմից արվող առաջարկությունները:

Դեկանատները հիմք ընդունելով ամբիոնների կողմից ներկայացված հաշվետվությունները և դեկանատի գործունեության արդյունքները ներկայացնում են ամփոփ հաշվետվության հարցերի հետևյալ հաջորդականությամբ:

1. Ֆակուլտետում ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված աշխատանքներ /ըստ առանձին ամբիոնների/, դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունները, նրանց կատարման փաստացի տվյալները, այդ թվում, դասախոսություններ, գործնական և լաբորատոր պարապմունքներ, ինքնուրույն և անհատական աշխատանքներ, տարվա ընթացքում ուսանողների շարժի տվյալներ, ուսումնական և արտադրական պրակտիկաների վերաբերյալ տվյալներ, ուսանողների հաճախումների վերաբերյալ տվյալներ, վերլուծություններ, իրականացված միջոցառումների վերաբերյալ տվյալներ, ուսման առաջադիմության

վերաբերյալ վերլուծություններ, կուրսային և դիպլոմային աշխատանքների /նախագծերի/ պաշտպանության և պետական քննությունների արդյունքների տվյալների վերլուծություններ, ուսումնական գործընթացի բարելավման ուղղված միջոցառումների տվյալներ դասախոսների որակավորման բարձրացման հետ կապված աշխատանքներ և այլն:

- կրթության բարեփոխումների միտված աշխատանքը,
 - կրեդիտային համակարգի ներդրման վիճակն ըստ ամբիոնների և դասախոսների:
2. Ուսանողների շրջանում տարվող դաստիարակչական աշխատանքներ /ներառելով համակարգողների կողմից կատարվող աշխատանքներ/:
 3. Ուսումնամեթոդական աշխատանքներ պատրաստված և հրատարակված մեթոդական ցուցումներ, ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր, այդ գործընթացում ընդգրկված և չընդգրկված դասախոսների վերաբերյալ, վերլուծություններ, գնահատականներ և այլն/, նաև պլան-կատարողականը և խնդիրներն ըստ ամբիոնների:
 4. Ֆակուլտետի գիտական խորհրդի աշխատանքները /գումարված նիստերը/, քննարկված հարցերը, ընդունված որոշումները, մշակված միջոցառումները և նրանց իրականացման վերաբերյալ տվյալներ/:
 5. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի աշխատանքները:
 6. Կադրերի պատրաստման և դասախոսական կազմի սերնդափոխության վիճակը, վերլուծություններ, խնդիրներ:
 7. Տեխնիկական բազայի ստեղծման և համալրման հետ կապված աշխատանքներ, եղած միջոցների օգտագործման արդյունավետություն:

Բոլոնիայի հռչակագրով կրեդիտային համակարգին անցնելու ուղղությամբ կատարված աշխատանքներ, առաջադիմության ռեյտինգային գնահատման, կրեդիտների կուտակման և առաջադիմության միջին որակական գնահատման հետ կապված աշխատանքներ:

Ամբիոնները և դեկանատները հաշվետվությունում կարող են ներառել նաև ուսումնական և դաստիարակչական աշխատանքներին վերաբերվող այլ հարցեր և խնդիրներ, որոնք պայմանավորված են մասնագիտական առանձնահատկություններով: